

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի, 2020 N 47

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Արցախի Հանրապետության ոստիկանության ծառայողների կողմից 2020 թվականի հուլիսի 28-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝ **ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Ե Մ**.

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Դավիթ Աբրահամյան», ք. Շուշի, Ղազանչեցոցի 82/1,
- 2) Ա/Ձ «Եփրեմյան Լարիսա», ք. Շուշի, Պոռոչյանի 6/1,
- 3) «Դրիմ» ՍՊԸ, ք. Շուշի, Ամիրյանի 1:

2. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը և որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Ժ. ՄԻՐՉՈՅԱՆ